

ՄԵԹՈՂԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻՆ

1.«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, դրանք ընդունելուց հետո սահմանված ժամկետում պետական իրավական փորձաքննության համար ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն: Նշված ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն չուղարկված նորմատիվ իրավական ակտերը համարվում են անվավեր: Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը՝ երկու օրինակից, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն են ուղարկվում կից նամակով: Իրավական ակտերի օրինակներից յուրաքանչյուրը պետք է իրավական ակտը ներկայացնող մարմնի կնիքով կնքված և թելակարված լինի:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի պետական իրավական փորձաքննությունը և պետական գրանցումը կատարում է դրանք նախարարությունում մուտքագրվելու օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը պետական իրավական փորձաքննության ընթացքում պարզում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին և իրավական այլ ակտերին, ապա նախարարությունը 3 օրվա ընթացքում իր փորձագիտական եզրակացությունն ուղարկում է այդ իրավական ակտն ընդունած մարմին՝ առաջարկելով այդ ակտն անվավեր ճանաչել կամ համապատասխանաբար փոփոխել: Եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը փորձագիտական եզրակացությունն ուղարկելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, իրավական ակտն ընդունած մարմինն այդ իրավական ակտում համապատասխան փոփոխություններ չի կատարում կամ դա անվավեր չի ճանաչում, ապա նախարարությունը պարտավոր է հայց հարուցել դատարան՝ օրենքի պահանջների խախտմամբ ընդունված նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու համար:

2.«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված՝

Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունված պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը: Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ: Նորմատիվ իրավական ակտ է համարվում նաև նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի գործողությունը դադարոցնող իրավական ակտը, նույնիսկ այդ փոփոխությունների կամ լրացումների իրավական նորմ չպարունակելու դեպքում: Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով:

3.«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների ավագանիները Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետք է **պարտադիր** ներկայացնեն հետևյալ նորմատիվ իրավական ակտերը՝

-իրենց կողմից հաստատված՝ համայնքի ավագանու կանոնակարգը

-համայնքի զարգացման ծրագիրը

-համայնքի բյուջեն

-համայնքի բյուջեում կատարված փոփոխությունները և լրացումները

-համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը

-առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, օրենքով սահմանված կարգով

-օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույթաչափերը,

-համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույթաչափերը

-համայնքի տարածքում գտնվող բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին համայնքի ավագանու որոշումը

-համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները:

Հարկ է նշել, որ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները

հաստատելու մասին համայնքների ավագանիների որոշումները պարտադիր Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն են ներկայացվում եթե դրանք համարվում են նորմատիվ իրավական ակտեր:

Այսպես, հաճախ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն են ներկայացվում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին համայնքի ավագանու կողմից ընդունված **անհատական** իրավական ակտեր, որոնք վերաբերվում են առանձին կազմակերպություններին կամ առանձին ֆիզիկական անձանց կամ առանձին հողատարածք տրամադրելուն:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ **անհատական ակտ է համարվում** իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների (այսուհետ՝ անձ) համար: Անհատական իրավական ակտն ընդունվում է միայն նորմատիվ իրավական ակտի համաձայն և դրա սահմանած շրջանակում:

4.Հայաստանի Հանրապետության համայնքների ավագանիները իրենց նորմատիվ իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն են ներկայացնում մի շարք խախտումներով, մասնավորապես՝

-որոշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն՝ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են իրավական ակտն ընդունող մարմնի անվանումը, իրավական ակտի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը և տեսակը,

-«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, եթե այդ ակտով ավել ուշ ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսված չէ,

-որոշման պաշտոնական հրապարակումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ արդարադատության նախարարությունն ներկայացնել ավագանու որոշման փոփոխված տարբերակն ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին փոփոխությունները,

-տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն ներկայացնել որոշումների, այլ ոչ թե քաղվածքների կամ արձանագրությունների տեսքով,

-որոշման նախաբանում «Ա» տառն անհրաժեշտ է փոխարինել «Ն» տառով, հաշվի առնելով որոշման նորմատիվ բնույթը,

-որոշման պաշտոնական հրապարակումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ներկայացնել որոշման ընթացակարգի տարբերակը,

-«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ արդարադատության նախարարությունը պետական փորձագիտական եզրակացություն է տալիս տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների, այլ ոչ թե որոշումների նախագծերի վերաբերյալ,

-որոշումներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պահանջներին, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի, իսկ ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Կետերը և ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, իսկ պարբերությունները՝ հայերենի այբուբենի փոթորատառերով,

-ավագանու որոշումը պետք է ստորագրված և կնքված լինի համայնքի ղեկավարի կողմից,

-որոշումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն ներկայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության օրենքներում կատարված փոփոխությունները և լրացումները,

-հարկ է նշել, որ ավագանու որոշմամբ հաստատված համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար տեղական տուրքերի և վճարների դրույթաչափերը շատ հաճախ չեն համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված տեղական տուրքերի դրույթաչափերին:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հաճախ ներկայացվում են անհատական բնույթի իրավական ակտեր, օրինակ՝ առանձին կազմակերպություններին կամ ֆիզիկական անձանց ֆինանսական արտոնություններ, օգնություններ տրամադրելու մասին և այլն:

Մինչդեռ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն պետք է ներկայացվեն միայն նորմատիվ բնույթի իրավական ակտեր: